

3639

1290

891-71  
P-70



ՊԱՏՄԱԿԱՆ ԶԲՈՅՑ

ԹՇՈՒԱՆԱՄԱՅՐ

Ա. ԱԶԱՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ա. ԶԱԼԻՆԵՍՆՅԻ

— Հայոց պատմութեազն —

ԹԻՖԼԻՍ

891.71

Բ-70

Տպարան Մայսկ Վարդանեանի

Տիգ. Մ. Վարդանյանց, Տրօնց. թ. № 11

1889

891.71

թ-76

# ՊԱՏՄԱԿԱՆ ԶՐՈՅՑ

## ԹՇՈՒԿԱԾ ՄԱՅՐ

154

Ա. ԱԶԱՏ ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ

Զ. ԶԱԻՐՆԵԱՆՑԻ

ԹՇ  
0



2003

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մովսես Վարդանեանի

Տիպ. Մ. Վարդանյանց, Տրոյց. փր. ձ. № 11

1889

1092

ԱՐԴՈՅԵՎԻՆ ՊԵՏՐՈՎՆԱ

15.

Дозволено Цензурою Тифлисъ, 18 Апрѣля 1889 г.



118

389

101

Հը, Պտուտակ, վերադարձաւ թագաւորի մօտից  
Ֆիխօն Նիկիտիչը. . . . Հարցրեց իշխան Պեօսր Իւա-  
ռվիչ Պրօգրովսկին, աչքերը կատւի նման կնճռած ու  
ոսամուտի վրա պառկած, արեւի տակը տաքացող հաս-  
ունի թզուկին:

— 05, Պետրուշա. պատասխանեց թղուկը. այսքան  
էլ իսպանածք. Էլ գիշերները քուն չունինք. գրում ենք  
ու գրում թագաւորը օրը հարիվ անգամ է կանչում  
եղ. իսկ այստեղ—մանքումն էլ հօ, այսքան նեղածք.  
· · · մի խուցի մէջն ենք մտածում, թէ պարոնը (ՅՈՅ-  
ԽՈՒՏ), թէ ես. դպիրները գրում են. մենք հարց ու  
փորձ ենք անում. իսկ ճաշելը, հրամեցէք սեղանա-  
տւն. Սիլվէստր հայրն էլ այնքան ժամա. երէգ ուրբաթ էր  
այց ձուկն անգամ յը տևեց մեզ, կարծես, թէ ես ու  
նողիւշկան էլ՝ վարդապետներ լինինք. ես էլի մի կերպ  
կ տանեմ, բայց դպիր Անդրիւշկան չի դիմանալ: Ե՞յ.  
բ էր Աստուածածնայ վերափոխումը. . . . հայր Սիլ-

վէտրը՝ ըլ նայելով, որ աշունն է արդէն, վառարանները չի տաքացնում։ տեսնում ես՝ նրա վանքումը դեռ ամառ է, այն ինչ պարսպից դուրսը սառնամանիք է։

— Լաւ, Պտուտակ. կը համբերես կ'ընտելանաս. Աստուծով ծննդեանը Մօսկա կը տեղափոխւենք . . . ասաց ժպտալով իշխանը։

— Ծննդեանը, Պետրուշա. ասաց թզուկը։ — Կը մեռնեմ, Աստուած վկայ, կը մեռնեմ. . . եւ լաց եղաւ։ Ներս մտան մի քանի մարդիկ եւ իշխանը թողեց թըզուկին, որը պառկած մղմղաց եւ վշտից քնեց։

— Վաղժւց է, որ գեներալը Մօսկաից դուրս է եկել։

— Մի ժամուչափ կը լինի. ասաց Գօրդօնը։

— Թագաւորի մօտն էիք արդեօք։

— Այս, էի. . . Ուրեմն, ինչ կայ Մօսկայում։

— Շատ ծիծաղելի է, իշխան։

— Ինչպէս ծիծաղելի. գուց է, կամենում էք առելուրախալի է։

— Ոչ, ոչ. չեմ սխալում. շատ ծիծաղելի է. թագուհին հրձիգներին պատերազմ գնալ է հրանգում բայց հրձիգները լալիս են, շփում են ձեռքերը. ժամ են յաճախում. պարոնները՝ օր ու գիշեր այցելում են միմեանց եւ ոչ մի վճռի չեն գալիս. Ես հրաման ստացայ գնալու եւ Վասիլ Վասիլիչ Գօլիցինին ողջունելու։ Նա Մօսկաի մեծ մարդն է եւ թագաւորից դեռ ոչ մի նկատողութեան չէ ենթարկել։ Նա ինձ ուղարկում աէր Սօֆիայ Ալեքսէնդրին եւ Խան Ալեքսէնդրին ողջունելու. . . ես պատասխանեցի. ողորմած եղէք, ներելու լինձ, իշխան. չեմ կարող. հրամանիս մէջ չէ ասւած։

Զեզնից՝ ուղղակի զինւորների մօտ պիտի գնամ եւ յետոյ Տրօիցկի վանկը։ Ադինօ։

Ներս մտաւ պարոն Իօրիս Ալեքսէնդրի Գօլիցինը։ Նրա հետ էին զանազան պետականների խումբը, հրձիգների գնդապետ Ցիկլէրը եւ միւսները։

— Հը, Տիխոն Նիկիտիչը դեռ չի վերադարձել, ինչ է։

— Ոչ, դեռ եւս։

— Վատ է, վատ. . . ինչով պիտի վերջանայ այս բոլորը. ասադ. պարոնը. քայլելով նեղ սենեակում, ուր ներկայ եղողմերը պատերին քսւելով՝ հազիւ էին տեղ տալիս նրան։

— Ի՞նչն է վատ, պարոն. հարցըց իշխանը։

— Վատ է, վատ։ Խաղաղութիւն չի լինի. . . դրժբաղդութիւն է, երբ մարդ 18-տարեկան է, խակ խելքը 40-ի. . . .

— Բայց ինչու է դժբաղդութիւն։

— Իրան ասածի կրմայ. դժւար թէ խաղաղութիւն լինի։ Զի կամենում լսել եւ ոչինչ. . . բոլորին գատում է եւ վերջ։ Եւ գատում է բոլորին հօր անիմայ օրէնքով. եւ թագուհի քրոջը եւ իշխան Վասիլի Վասիլիչ Գօլիցինին եւ իշխան Ալեքսէյ Վասիլիչ Գօլիցինին եւ Լէոնտիի Ռօմանովիչ Նէպիլիւելին. բոլորին, առ հասարակ, բոլորին։ Զարմացրեց. պարզ զարմացրեց, պատրիարքին էլ էր կամենում դատել, բայց Խօսկիմը խոստովանեցաւ, թէ ինչ է խօսել թագուհին. ես բոլորը տեսայ. . . վատ է, վատ. . . .

— Բայց ինչու է վատ. է։

— Նրա համար է վատ, իշխան, որ ես Վասիլի համար խիստ եմ վախում. . .

— Իւրաքանչիւրը ակամայ իրայնին բարեկամ է.

այդ այդպէս է, Բօրիս Ալէքսէեվիչ. բայց մի վախիր. իշխան Վասիլին մեծացել է ազնիւ ծառայութեամբ. նրան խրատել չէ հարկաւոր. նա ընդդէմ խորհուրդներ չի տալ:

— Ցաւը՝ հէնց դրանումն է, որ թագուհուն խորհուրդ է տւել Լեհաստան փախչելու. . . .

— Լեհաստան. աղաղակեցին բոլորը:

— Ել ի՞նչ ասենք. ասաց իշխանը վշտացած, յիմարացել է. . . . բայց ի՞րաւ է այդ:

— Պատրիարքն է մատնել: Եւ ի՞նչպէս որ պատրիարքը ասաց. այնպէս էլ Տատեանայ Միխայելովինան եւ Մարիա ու Մարֆա Ալէքսէենաները վկայեցին, որ լսել են. . . . բոլոր յոյսը Տիխոն Նիկիտիչի վրա է. նրա դատին պիտի ենթարկւեն. . . .

— Նա այդ գիտէ. միայն Տիխոն Նիկիտիչը, ինչպէս ինքդ էլ գիտես, անողորմ է. նա՝ թէ օրէնքը—այդ միեւնոյնն է:

— Կարելի է մեղմացնենք: Դուք օգնեցէք միայն: Դոները բացւեցան եւ բոլորը լռեցին: Ներս մոռապարոն Տիխոն Նիկիտիչ Ստրէշնեւը: Մեծութիւնը և բարիութիւնը խառնւած խորին տիրութեան հետ, հովանաւորում էին պարօնի երկայն ու լայն գեղեցիկ դէմքը. դպիրները նրա յետեւից, նրա թղթերն էին տանում:

Պտուտակը ցատկեց լուսամուտից եւ վազեց դէպի նրան: Ստրէշնեւը փայփայելով նրա գլուխը, դիմաւորող, բայց ակամայ ժպիտով, ասաց ներկայ եղողներին. ողջ կացէք, բարով էք եկել . . . իմ ուշանալը ակամայ էր. . . . Աստուած ողորմած է. . . . եւ նստեց մեծ բազկաթոռի վրա, որ Պտուտակը գ.ժւարութեամբ քաշեց

դացած, քանի որ չէին կարողացել ճիշտ եւ լաւ լուրեր հաւաքել. նրանք մինչեւ անգամ Մօսկովյի լայն ճանապարհով գ.ժւարութեամբ էին վերագառնում, որը ծածկած էր գնացքներով եւ հետուն մարդկան բազմութիւնով. նրանց ամեն տեղ գեռ դիմաւորում էին. իսկ յետոյ ծաղրելով ճանապարհում: Ճողովուգը՝ Պետրի հետ ՚ի միասին գիտէր, որ թագուհին զղնում է. բայց չէր հաւատում նրա անկեղծութեանը: Մեզադրական արձանագրութիւնը՝ համայն ամբոխի առաջ եւ հանդիսաւոր կերպով կարգացւեցաւ Տրօիցկի արքունական պալատի պատշգամբից եւ այդ՝ թագաւորի ներկայութեամբ: Մահապատժի գէնքերը՝ արդէն վաղուց դաշտն էին դուրս բերւած, վանքի պարիսպներից ոչ հեռու՝ եւ հետաքրքիրներին սարսափ էին ազդում: Բայց մարդու գաղմանման բնաւորութիւնը այնպէս է, որ վաղան հանդիսի հետաքրքիրները, խոռնում էին գարհուրելի զէնքերի մօտ եւ այսօր եւնոյն սարսափով հեռանում: Օր օրի վրա սպասում էին ողբերգական ներկայացմանը. հարցնում էին ժամանակի մասին, իւրաքանչիւրը՝ ինքնակամ որոշում էր օրը եւ ժամը: Պատիժը չէր կարաղ առանց հրձիգների գլխաւոր հրամատար, Սօֆիայի գլուխաւոր խաղալիք Նակավիտիին կտտարւել. բայց լուրերին վերջ ըլ կար:

Մի կին միայն չէր հետաքրքրուում եւ ենթարկւում լած լուրերին: Նատ ուշ՝ կէս գիշելից անց՝ նա եկաւ Տրօիցկի վանքի մայր գուների մօտ եւ նրա բոլոր յոյսերը քանդուում էին: Դոներից անցնել՝ թողնում էին միայն նրանց, որք անձամբ ծանօթ էին կամ գերմանական կապիտանների կամ աւագ պետականների հետ: Զերմեռանդ գերմանացիների երկիւզալից հարց ու փորձերին

գերջ չը կար. հարցի ժամանակ նրանք մտնում էին իւրաքանչյուրի ընտանէական կեանքի ամենամանրամասնութիւնները, բոլոր յարաբերութիւնները եւ կապերը, մինչեւ իսկ եկտրների երկրաբանութիւնը: Ուխտաւորներից շատերը՝ որք պատահմամբ էին ընկել Տրօփցկի գործը, գերմանացիների սրտագին աշխատութեամբ, նստած էին ամենախիստ հսկողութեան տակ եւ գիշերները կասկածելի հարցերի էին ենթարկում: Մի միայն կանաքը էին ազատ այդ կասկածներից. եւ ահա, թէ լինքու Աւգոտեայ Պետրովնա Լիխոնուհին, ազատ նստել էր Տրօփցկի մայր դռների մօտ, ողջ գիշերը եւ առաւօտը: Նատ պարոններ եւ դրացի նշանաւոր անձինք, խորհրդի գըպիրներ, պարսպներից վանքը անցան. իւրաքանչյուրը խցում էր ականջները, երբ Աւգոտեայ Պետրովնան պաշտպանութիւն էր խնդրում. եւ այդ պերճախոսական ձեւ չէր, ոչ. այլ անցնողը պարզ խցում էր իւր ականջները եւ անցնելով դռներից ազաղակում. չեմ լսում, չեմ լսում: Այդ սարսափ գցողը՝ երեք Լիխոնացիների անունն էր. նրանք՝ հրձիգների գլխաւոր հրամանատար Նալլօվիտի, Ռէզանօվի, Գլադկիների, Պետրօվի եւ Զերմնի հետ ի միասին, գնացել էին Պրեօքրօժէնսկի, սարսափելի հրաշք գործելու համար, որը բացւել ու քանդւել էր երկու Ֆէօկտիստով եւ Մինօվ հրձիգների հաւատարմութեամբ, որոնք յայտնել էին իշխան Բօրիս Գօլիցինին, յանցանք գործելու մտադրութեան մասին:

Հետախուզութեան գործը արդէն կարդացւած էր. էլ կասկած չէր մնացել. մահապատիժը անխուսափելի էր: Եկտ Մօսկայից գեներալ Գօրդօնը եւ Լիխոնուհին նրա ոտքերը ընկաւ:

— Ես կ'ասեմ Տիխօն Նիկիտիչին. պատասխանեց գեներալը. իսկ նորին Մեծութեանը չեմ համարձակվ. իմ գործը չէ: Ես կարեկցում եմ քեզ. բայց օգնել չեմ կարող. գնա հիւրանոց. ահա քեզ մի բուքի: Այնտեղ սպասիր մինչեւ ես քո յետեւից կ'ուզարկեմ, եթէ Տիխօն Նիկիտիչը կը թոյլագրէ իրան հետ տեսակցելու: — Իմ բարերար, իմ հրեշտակ. տացէ քեզ Տէր . . . տացէ Տէր ամէն երջանկութիւն. . . բարի յաջողութիւն. . . տացէ քեզ Տէր. . . Երեխայ չունենալ. արտասւալից ողբաց Լիխոնուհին: Գօրդօնը արդէն հեռու էր. Աւգոտեայ Պետրովնան գեռ օրհնում էր նրան համբուրելով մի բուքին եւ խոստանալով գցել այն հըրաշագործի գանձատուփի, եթէ կարող լինի եւ օգնի թագաւորի սիրտը դէպ ողորմութիւն բեկել:

Պ.

Երեկոյեան՝ վանքի հիւրանոցի մօտ, որը ջերմեռանդ ուխտաւորների մշտական հանգստեան տեղն էր, շատ մարդիկ հաւաքւեցան, ուստի այժմ՝ անժիւ զրոյցների, յոյսերի, պատմութեանց ու գուշակութեանց ժողովատեղի էր դարձել: Հիւրանոցի առաջեւի հրապարակի վրա ժողովը աղմուկներ էր հանում, քանի որ սենեակները բռնւած էին պալատականներով: Աւգոտեայ Պետրովնան արեւի տակ տաքացնում էր իւր պառաւ ոսկուները. երբեմն աղօթում էր, երբեմն նայում էր վանքի մայր դռների ուղղութեամբ. մարդկիլ նկատեցին շուտով՝ թէ պառաւը եւ թէ նրա հոգւոյ վիշտը եւ աւելի հետաքրքր-

րութիւնից, քան կարեկցութիւնից, հարցրին.—ումն ես սպասում, մայրիկ:

—Դերմանացի պարոնին. նա խոստացաւ իմ յետեկոց մարդ ուղարկել:

—Առանց քեզ էլ, նա շատ գործ ունի. բայց ի՞նչ կարիք քո յետեւից մարդ ուղարկելու. ներկայում ծերին էլ չեն թողնում վանքը, ուր թէ քեզ նման պառակն. . . . մարդիկը ծիծաղում էին:

Առանց գործի պարոններին էլ չեն թողնում. իսկ գործի համար, աղքատին էլ կը թողնեն թագաւորի մօտ:

—Գործի համար. . . . ի՞նչ գործի համար:

—Լիխօնուհին պատմեց. եւ մարդիկը հեռացան, փախան:

—Պառաւը նրանց յետեւից շարժեց իւր ալէզարդ գլուխը եւ միեւնոյն ժամանակ տեսաւ Գօրդօնին՝ հազիւ հազ վեր կացաւ եւ լուռ ու աննկարապրելի երկիւղով սպասում էր գեներալին. նա յուզւած կերպով մըտածում էր. ոհի, խեղճ Աւդօտեայ, եթէ դէպի քեզ ք լինի գալիս:

—Դէշ. ասաց գեներալը.—Տիխօն Նիկիտիչը որեւէ հնար չունի (պառաւը ծաւնկ չոգած եւ ձեռքերը երկնքին ուղղած, լսում էր Գօրդօնի ճառը): Իսկ մենք այսպէս կանենք: Վաղը, պատարագից առաջ, եկ եկեղեցւոյ մօտ եւ սպասիր, մինչեւ թագաւորը պատշգամբի վրա երեւայ, ես կը հրամայեմ, որ քեզ թոյլ տան անցնելու. . . . խնդրիր թագաւորին ողորմած լինել. . .

—Պառաւը անշառնջ պառկեց հողի վրա: Գօրդօնը պառաւի շնորհակալութիւնից հեռացաւ. շուտով գերմանացի զինւորը տարաւ Աւդօտեայ Պետրովնային պահ-

նորդական խրձիթը, նստացրեց նստարանի վրա, կերակրեց, ինչ որ Աստուած տւել էր եւ պառաւը երկար ճանապարհից եւ հոգւոյ ալէկոծութիւնից յոգնած, երեք որ անքուն մնալուց յետոյ՝ քնեց առաջին անգամը:

Դ.

Զանգակները զօղանջում էին. բարեպաշտները՝ ամեն կողմից ձգտում էին դէպի վանքի զանազան դըռները. բայց անզիջաննելի գերմանացիները, յետ էին մղում նրանց դէպ միւս եկեղեցիները. մի քանիսը օգտւելով, կամ ծանօթութեամբ կամ հզօրների պաշտպանողութեամբ, կարողացան անցնել վանքը. բայց այդ քիչերիցն էլ այնքան նեղածք ու տօթ էր ամբողջ հրապարակի ընդարձակութեան վրա, արքունիքից մինչեւ աամառը: Սպասում էին թագաւորին: Միլվէսոր հայրը կատարեալ զգեստաւորած պատրաստեց ընդունելու երիտասարդ թագաւորին. Ժողովուրդը ձգտում էր տեսնել ամենից յարգած մեծ գործերի յոյսը. դեռ մինչեւ այդ պարզ երկնքի վրա չէր երեւում այն ամպը, որ խոստանալիս լինէր սարսափելի եւ բարեգործ փոթորիկ, որ ցնցէր եւ թարմեցնէր թմրող Ուուսիան, չէին իմանում, թէ Պետրը ի՞նչ միջոցներով պիտի մեծութեան գահ բարձրանայ. բայց հաւատում էին, որ երիտասարդ թագաւորը նախասահմանած է Ուուսիան վերաշնելու, հաւատում էին անպայման՝ եւ հաւատում էին, նայելով՝ թագաւորի գեղեցկութեանը արծիւ աչքերին, հազարդիւտ բանականութեանը, հանճառին եւ երկաթանման կամքին. . . . գլխաբաց եւ անշառունջ սպասում էին

մարդկիլը: Յանկարծ ամբոխի մէջ ձայն բարձրացաւ.— Հենց թագաւորի մօտ: Ժողովուրդը ակամայ բաժանւեցաւ եւ Աւտոտեայ Պետրովնան կանգնեց գաւթի առաջ:

— Հեռացիր, պառաւ. այստեղ կանգնել չի լինիլ.... ասաց վանքի ունկնդիրը: Լիխօնուհին չը հնազանդեցաւ: — Կորիր, պառաւ, աղաղակեց ծաղրածու զինւորը շարժելով ձեռնափայտը:

— Սպանիր, սպանիր. պատասխանեց նա. — Աստուած տեսնում է, շնորհակալ կը լինիմ: միայն դու կը թաղես ինձ. ով իմ բերկրանկը:

— Ուրեմն, գնա Աստուծով. ասաց ծաղրածուն մեղմացնելով ձայնը:

— Ողորմած եղէք, թողնել դրան, մօտենալով ծաղրածուին ասաց Գօրդօնը. — Նա ոչ ձեզ եւ ոչ ոքի չի անհանգստացնիլ:

Հնչւեց երեակ զանգը. ամբոխը խունեց: Պետր Ալեքսէեւիլը գլխաբաց մէն մէնակ անցնում էր արագ քայլերով, փոխադարձաբար ողջունելով երկու կողմերն էլ. վարդապետ Սիլվէստրը, հոգեւորականների հետ ի միասին եւ պարոնների ուղեկցութեամբ երեւաց գաւթում. եւ ձեռքերը վեր բռնելով պէտք է սկսէր դիմաւորիչ ճառը. . . . յանկարծ ամբոխի միջից դուրս եկաւ դողդոջուն բարձրահասակ կինը. երկու արտասուքի առուակներ էին հոսում նրա կնճուտ դէմքի վրա. Մթունքները կապտել ու դողում էին. ձեռքերը դէպ թագաւորը մեկնելով, նա մեծահոգութեամբ եւ հանդարտ երեք քայլ առաջեց եւ անշշունջ լնկաւ Պետրի ողքերը:

Թագաւորը յետ քաշւեցաւ: Նրա դէմքը կասկած արտայայտեց. նայեց իւր շուրջը . . . մօտը ոչ ոք չըկար:

— Ի՞նչ ես կամենում, տատիկ. Հարցրեց նա, վեր բարձրացնելով դժբաղդին արքայական սեպուհ ձեռքերով. Գօրդօնը գաւթից մօտ վազելով, համարձակւեց օգնել թագաւորին.

— Ողորմիր. . . . կարողացաւ հեկեկալ միայն Լիխօնուհին եւ նորից ընկաւ թագաւորի ոտքերը: Զարմանալի էր: Թագաւորը անշարժ կանգած էր, կարծես զրկամենալով աղատւել, զզւացնող պառաւից. կատարեալ հանգիստ եւ մի քանի վայրկենից, Հարցրեց քաղցրութեամբ:

— Ասիր, ի՞նչ կայ, տատիկ: Լայ եղար, ցաւըդ փոքր մեղմացաւ. յիմայ ասիր, ի՞նչ ես կամենում:

— Ողորմիր, որդոցս, մեր արեւ թագաւոր, մեր ուղղափառ, մեր անտեսանելի: Մի թողնիր պառաւիս, որը ու անօգնական, ողորմիր որդոցս:

— Բայց, ովքէ՞ր են որդիքդ:

3) — Լիխօնացիները, — հայր թագաւոր:

Թագաւորը կնճուտեցաւ, դէմքի վրա սառսուր վազեց, նա յետ քաշւեց եւ ասաց միջահատ կերպով: — Խիսանութիւն չունեմ, իշխանութիւն չունեմ. . . . եւ առաջ անցաւ: Վարդապետի ճառը շատ կարծ էր եւ թագաւորը՝ հոգեւորականների ու պարոնների հետ մտաւ տաճառը:

— Ո՛վ, երկնային թագաւոր. աղաղակում էր պառաւ, առանց չոգած տեղից բարձրանալու, Սիլվէստրի ճառի ժամանակ եւ աշքերն ու ձեռքերն մայր եկեղեցուն դարձրած. — Երկնային թագաւոր, առատաձեռնիր ողորնութեամբ մեր թագաւորի միրտը, որ ողորմի որդոցըս, քանի որ դու ողորմեցիր քո թշնամիներին:

Այդ ժամանակ տաճառին մօտենում էին. մայր-թագուհին, Տատիանայ Միխայելովնան, Մարիա եւ Մարֆա Ալեքսէւնաները եւ մի քանի պետականներ։ Առաջ անցնել չէր կարելի։ Նեղ եւ քարայտակ ճանապարհի վրա, որը միայն ազատ եւ լայն էր, պառաւը շարունակում էր բարձրաձայն աղօթել։ Ցաւով ու վշտով լրցած ու բեկած նա յիմարացածին էր նմանում։ Ամբոխը երկիւղով էր նայում նրա վրա։ Խորին տիրութիւնն ու խելագարովթիւնն էին սահմանները, եւ յաճախ, առանց ուշագնաց լինելու, խորին տիրութեամբ լի մարդը, անկապ է խօսում։ Պառաւը նստեց քարայտակ ճանապարհի վրա, սրտի խիստ բոցը՝ ցամաքեցրեց նրա աչքերը. նա նայեց ամբոխին եւ ժպտաց. . . ժպտաց եւ բոլորը դարձրին նրա վրա իրենց հայացքները։ Զարհուրելի՛ էր։

Գնացէք աղօթելու. ասաց Լիխօնուհին, ամբոխին գիմելով. — Ինչու էք ուշանում։ Գնացէք աղօթելու, եթէ ոչ, ձեղ էլ կը պատահի ծերութեան օրերում նստել մերկ քարերի վրա ու լաց լինել ձեր որդոց համար։ Բայց միթէ ես չեմ աղօթել, եւ չէ՞ աղօթում։ — Մեր պաշտպան եւ հրաշագործ Սէրգէյ Ռադօնէժակի, բարձրացնելով ձայնը՝ աղաղակում էր պառաւը. յայտնի՛ թագաւորին, թէ ես Աստուծոյ տուած իւրաքանչիւր որդուս համար, ինչպէս էի ոտքով Մօսկայից գալիս քո սուրբ մասունքներին եւ ինչպէս ամեն անգամ ըստ կարողութեանս բոլորը քեզ էի բերում։ Եւ թէ ինչ էի ինդրում, դու արդէն գիտես. ով հրաշագործ. . . ասիր թագաւորին։

Այդ ժամանակ դժբաղդին մօտեցաւ մի գերմանացի պահնորդ եւ նրան ճանապարհից գուրս էր քաշու

— Մի շարժի՛ր ինձ. գերմանացի։ Տես իմ սրտի դրութիւնը, քանի որ սրդիքը հեռացնում են նրանից. եւ միթէ թագաւորը մեր հայրը չէ։

— Նանապարհ բացէք թագուհուն, ասաց կապիտանը։

— Լիխօնուհին չէր հասկանում եւ շարունակ վայնասում էր։

— Ձեռք մի տար ինձ, մի շարժի՛ր, կը բողոքեմ թագաւորին։

— Թողէք դրան. ասաց թագաւորը, Գօրդօնի հետ գուրս գալով եկեղեցուց։

— Ամի՞ր ինձ, ինչ բարիք կարող եմ անել քեզ եւ թող, որ պատարագին ներկայ լինեմ։

— Տուր որդիկս, ով թագաւոր։

— Չեմ կարող։ Նրանք չարագործներ են։ Կարելի է եւ իմ վերաբերութեամբ. ես առանց այդ էլ ներեցի նրանց եւ եկել եմ, նրանց համար աղօթելու. թո՛ղ ծէրը ներէ նրանց մեղքերը եւ չը զրկէ նրանց երկնային թագաւորութիւնից. . . . Չեմ կարող։ Աստուծ ամեն բան կարող է. իսկ ես չեմ կարող։ Աստուծուած ինձ թագաւոր է կարգել, որ նրա երկրաւոր թագաւորութեան մէջ, ճշմարտութիւն լինի. իսկ դրանից դուրս, ոչ պատժել եւ ոչ ողորմել, չեմ կարող։

— Հայր թագաւոր, ողորմիլոդ ծէրը չի բացասի։ Բոլոր երեք որդոցս էլ պարուները գատապարտեցին։ Նրանք թշնամիններ են, եւ իմ՝ թէ նրանց կեանքը՝ բաւական չի լինի, լալու մեղքերը եւ աղօթքով ու պահքով մաքրելու, թէ Աստուծոյ եւ թէ մարդկան պոաց։ Բայց տես, թագաւոր, իմ անօգնական ծերութիւնս. չէ որ շատ ժամանակ չէ մնացել ինձ՝ քաշ գա-

լու այս աշխարհիս վրա: Ողորմութիւն խնդրել՝ ըստ գիւտեմ եւ չեմ կարող. իսկ ձեռքերս, ահա տեսէք, անկարող են գործելու... մնում է, որ պէտքէ բացօթեայ մեռնեմ, ինչպէս շունը—ցրտից. ոչ ոք չունիմ, որ ինձ խնամեն ու հողին յանձնեն. . . հայր թագաւոր, ողորմիր:

Պետը անհամբերութիւն էր արտայայտում, վերջապէս խիստ գծագրութիւն բոնելով, ասաց. լսիր, պառաւ. բարկացիր ու նեղացիր քեզ վրա: Եթէ մանկութիւնից որդիքդ Աստուծոյ երկիւզով մեծացնէիր. եւ բարի ուսում տայիր, չէիր տեսնիլ այս ամօթն ու ցաւը:

Մինչեւ այդ ժամանակը պառաւը նստած էր, թուլութիւնից չէր կարողանում տեղից բարձրանալ. բայց այդ յանդիմանութիւնը նրան ոգեւորեց. վերջին ուժերը հաւաքելով կիխօնուհին վերկացաւ, մօտեցաւ թագաւորին եւ ձեռքերը կրծքին դնելով. ասաց մեղմօրէն:

—Յանդիմանութիւնդ իզնուր է, թագաւոր: Տանը՝ որդիքս ինձանից վատ բառ չեն լսել. հէնց որ գրանց հայրը վախճանեցաւ, ես գրանց գլխիցս առաւել, հեռու էի պահում ամէն չարիքից. եկեղեցի էի տանում. տանս գալիր էի բերում, նա գրագիտութիւն էր ոովորեցնում, գրքերից ընտիր հատածներ էր կարդում եւ բռլոր թազի մէջ՝ իմ որդիքը մատով ցոյց տալու էն: Այդպէս մեծացրի, աւագը 18 տարեկան. կրտսերը 16: Բաւական է ազատութիւնը, ասացի ես. ժամանակ է Աստուծոն եւ թագաւորին ծառայելու. . . հագնեցայ, հագցրի տղայքս եւ նոյն առաւօտն եւ եթ տարայ նրանց զօրաց գունդը: Երեքին էլ հրձիգ գունդը տփի: Այդինչ ես անում, Աւդոտեայ Պետրովնա. ասում էին դըրացիներս, այդպիսի բարի երեխաները եւ երեքն իմիամին հրձիգ տփիր: Դրա համար եմ այդպէս բարի սր-

նուցել եւ ուսում տւել, որ նրանք թագաւորական ծառայութեանը պէտք լինին, ասում էի ես գոհ մնում Աստուծուց, որ օգնեց ինձ որդիքս այդպէս մեծացնելու, որ թագաւորին պէտք պիտի գան: Ուրեմն, ես չեմ մեղաւորը, որ հրձիգների մէջ վչացել են. իմ հսկողութեան տակ չեն վչացրել մեղքով՝ նրանց հոգիքը: Ով թագաւոր, յետ տուր նրանց իրենց մօրը. թողէք իմիամին քաւենք. . . թագաւոր, ողորմիր:

Պառաւը ընկաւ եւ ձեռքերով գրկեց թագաւորի ոտքերը:

—Ի՞նչ արած. հառաչելով ասաց թագաւորը. Տէր, ներիր իմ գործելիք մեղքը:

—Բոլորն չեմ կարող ներել. ընտրիր քեզ համար նրանցից մէկը, վեր առ հետո եւ գնա Աստուծով: Գօրդօն, գնա արձակիր դրա այն որդին, որին ինքը կընտրի: Թագաւորը մոտաւ տաճառը: Պառաւը անզգայ ընկած էր: Դերմանացի զինտրները վերցրին նրան եւ պարսպի կողմը տարան. իսկ դրանց՝ մոտածելով հետեւում էր Գօրդօնը:

Ե.

—Հը, ի՞նչ է Պօրօխ, գղրդեցնելով շղթաները, ասաց Սիմէօն կիխօնացին, ես փոքր ինչ նիրհեցի: Զը լինի զանգահարութիւնը եղաւ:

—Մի խանգամիրիր: Սօւա, թող «հաւատամք»ը վերջացնեմ. . . պատասխանեց կրտսեր կիխօնացի Ակէքսէյն եւ լուսթիւնը շարունակեց. Երեխմն հեցում էր աղօթելու մոմունջի ձայնը, այդ էլ շուտ լուեց:

— Երեկի այսօր տօն է, որ ողջ օրը շարունակում  
է ժամերգութիւնը: Եւ զիտե՞ս, մի տեսակ անհանգիստ  
է լինում մարդ, երբ միաները աղօթում են:

— Աղօթիր եւ դռ, Յօւա. . . .

— Ասելը հեշտ է. իզուր չէ ինձ Սօւա կոչելը.  
ողջ գիշերը աչք չեմ խփել, ես արդէն, իմ ժամանակին  
աղօթել եմ. . . .

— Ես նոյնպէս: Ես եւա. ասացին միւս երկու եղ-  
բայրները:

Բայի այդ՝ մարդ այնքան հեշտ չի կարող քնել, քանի  
որ ոտքերի տակ ջուր լինի, իսկ երկաթը՝ կողքն է խըռ-  
տում: Երանի, մահից առաջ գոնէ կրշտանայինք քնով:

— Ոչ, Վիուն: Իմ կարծիքով պէտք է ուտել. առանց  
այդ էլ երկար կը քնես. միայն ամիսու, որ առանց գլխի:

— Հեռու չի թոշի. հրձիգների ձեռքով չեն կտրելու.  
պատասխանեց Սէրգէյը, կամ Վիունը, որի վերջին ա-  
նունը հրձիգների կոչումն էր:

— Բայց լսում էիք, եղբայրներ, ասաց Ալէքսէյը.  
որ գպիրը կը լըզգաց, երբ կրծնական ցուցակը կարդում էր:

— Խնչպէս ըս լսեցինք. գիտէք, որ ես նախանձւե-  
ցայ. կարծես դպիրը՝ կարդալուց առաջ եղը կուտած  
մինէր. լիզում էր. . . .

— Բայց ճշմարիտը խոստովանւած, մենք հրէշ ձե-  
ացրինք մեզ նրանց առաջ. մեզ վրա նայում էին, որ  
նայում: . . . .

— Եւ ի՞նչ կար վախելու: Թէ եւ հետախուզականը  
կարդացին եւ ասացին, որ Լիխօնացիներին միայն գըլ-  
խները պէտք է թուցնել. իսկ ես ձեռքով շարժեցի ու  
չ կարողանալով ինձ պահպանել, ասացի բարձրաձայն.

Եթէ միայն այդքան է, շնորհակալ ենք. եւ մեծ պա-  
րոնին մինչեւ գօտին երկրպագեցի:

Ո.սոնւծոյ վիժմունքներ. նրանք կառակներ էին  
անում մահուան վրա եւ այդ այն ժամանակը՝ երբ  
երես առ երես դէմ են նրա հետ եւ կարելի է մի  
ակնթարթ էր մնացել մինչեւ վերջին ժպիտը: Դրանց  
համար չէր, որ խեղճ պառաւը: Մօսկայից Տրօիցա էր  
եկել. վախելով՝ մի գուցէ ուշանայ, եւ խրաքանչիւր  
գիւղում հարցնում էր. թէ Տրօիցում դեռ ոչինչ  
չէ եղել: Եւ նրանց համար չէր, որ նա այնքան ջեր-  
մագին կերպով աղերսում էր թագաւորին. . . . ոչ,  
նրանց համար չէր, այլ հառազատ որդոց համար էր  
աղերսում Աւգոտեայ պետրովնան, հոգուց անիծելով  
յանցանքը եւ յանցաւորները:

— Լսում ես, Պօրիս, ուտեսու են բերում: Հեռուից՝  
ես զգում եմ: Եւ իրաւ մարդիկը մօտենում էին եր-  
կաթէ դռներին. բանալիքը շրխկաց.. բայց դռները չէին  
բացում: . . . .

— Ձեմ կարո՞զ: Թոյլ տուր, պարոն, գնամ թագա-  
տրի մօտ. գուցէ բոլոր երեքին էլ կը ողորմի:

Գօրդօնը ժպտաց եւ գլուխը շարժելով, ասաց:

— Ո՛չ, էլ ուրիշ ողորմութիւն չի լինի. ես սրա վրա  
էլ, ո եւ է յոյս չունէի:

Գնանք: ժամանակը թանկ է. . . .

— Սպասիր, սպասիր. մի բանար: Մէկին կուրախաց-  
նեմ: բայց երկուսին կը սպանեմ: Թոյլ տուր բոլոր հոգ-  
ով ոգեւորւմի: . . . .

— Մայրիկ, ժամանակ չը կայ:

Գօրդօնը ասաց եւ շարժեց ձեռքով. երկաթէ դռու-  
ները ճռռացին եւ Աւգոտեայ Պետրովնան արդէն կախ

Էր ընկել Ալէքսէյի պարանոցից. առաջինը նա պատահեց մօրը. . . . Չարագործները, ակամայ զգացմամբ, մօր ձայնը լսելով՝ վեր կացան. մահուան դժգոնութիւնը պատել էր նրանց սարսափելի դէմքերը. արտասուքներ չը կային. նրանք վաղուց յետ էին սովորեցրել լացը: Մի քանի ժամանակ միայն տեւեց լուռ ու մունջ դիմաւորութիւնը. . . . յետ քաշւելով եւ որդու ուսերից բռնելով, պառաւը աշխատում էր նայել դէմքին եւ հարցրեց հաղիւ լսելի ձայնով:

— Ալէքսէյ, դու ես արդեօք: Պատասխան չը հետեւեց եւ ոչ մի բառ:

— Սիմէօն, սիմէօն եւ պառաւը փաթաթեց ձեռքերը աւագ որդուն. հեկեկանքներ էին, որ հնչւեցան եւ արտասուքներ, որ հեղւեցան:

— Սէրիօժա: եւ երրորդ ծննունդը ընկաւ անբաղդ մօրը գիրկը:

Բայց նրանք չէին զգում այդ տեսակցութեան քաղցրութիւնը. զղջման ջերմութիւնը: Միայն մի սարսափ էր մոտել նրանց ներս՝ այն է բարկացած հրեշտակի ներկայութիւնը, որ եկել էր երկնային զէնքով պատժելու դրանց: Նրանք լոել էին: Գօրդօնը շարժւած էր. բայց տեսակցութիւնը չափից դուրս երկար էր, եւ Գօրդօնը շուր գալով, արտասուքները յերեւեցնելու համար, որ զինորականի դէմքի վատ գծագրողն է, ասաց:

— Հը, մայրիկ. պէտք է վերջացնել: Ո՞րը . . . . :

— Ո՞րը. . . . Աղաղակեց նա. յիշեց եւ աննկարագրելի սարսափը, կատաղեց պառաւ կրծքում:

Ո՞րը. . . : ո՞րը. . . (կարծես հարցը աստիճանաբար մեծանում էր դժբաղդ. պառաւի հոգում: նրա հետ մեծանում էր եւ սարսափը):

— Սիմէօնին, սիմէօնին, աղաղակեց նա եւ նորից ընկաւ որդու վրա, նրան գրկելու:

— Իմ առաջնեակ. հայրդ կռիւ էր գնացել, որ դու ծնւեցար. դու էիր ինձ համար ամէն ինչը եւ մարդուս քեզնով էի յիշում եւ Աստուծուն քո ժամանակն էի աղօթում եւ քո օրօրոցիդ մօտ ես քուն չը գիտէի...

— Ուրեմն՝ Սիմէօնին. ասաց Գօրդօնը:

— Ո՞չ, ոչ. սպասեցէք: Խսկ Սէրիօժան: Խսկ Ալէօշան. . . ինչով են մեղաւոր որ, առաջնեակներ չեն: Եւ ինչպէս էի սիրում ես Սէրիօժան. ինչ խելացին էր. ինչ լաւ կըլինէր, լսել էի բարի մարդկանցը, չէի տւել հրձիգների գունդը, չէի թողել, որ գափիրները գրագիտութիւն սովորեցնէին. . . . դա էլ ինձ ամենից աւելի էր սիրում: պատահում էր եկեղեցի էի գնում. միւսները՝ այս կամ ոչ. բայց Սէրիօժան միշտ հետո էր լինում: փողոց էի գնում, նոյնապէս: Ո՞վ էր հարեւանների մօտ ուղեկիցս. ով էր պառաւի յետեւից եկողը: Սէրիօժան: Մեր թաղում, Սէրիօժանի հատը, ոչ ոք չունէր:

— Ուրեմն, Սէրիօժանին:

— Ալէօշինկա՛, իմ աղաւնեակ: Հայրդ քեզ էլ չը կարողացաւ օրհնել. նա քո ծննդից մի ամիս առաջ հըրաժարւեցաւ եւ լաց եմ եղել ես քեզ հետ ու քեզ վրա. . . Զեմ տալ ես քեզ, Ալէօշինկա՛, հանգիստ եղիք. դու իմ վերջին մշտակարօտ որդիս ես. հակառակ գէպըում, միասին պիտի մեռնենք:

— Վերջապէս, վճռիք, պառաւ. անհաստատ ձայնով ասաց Գօրդօնը:

— Պարմն, չեմ կարող. չեմ կարող, պարոն. Աստուծ էլ տեսնում է, որ չեմ կարող:

Թող ինձ թագաւորի մօտ, թող մեր արեւի մօտ:

Ի՞նչ արժեն նրա համար սրանք . . . նա այնքան ժողովուրդ ունի. թող, որդիքա ինձ տա, թող . . . Եւ պառաւը վազում, ընկնում էր դռներին:

—Չի կարելի. ասաց Գօրդօնը, ուղղելով: Պառաւը դողաց ողջ մարմնով. Մէկին միայն՝ եւ շուտ, եթէ ոչ, ես ինքս կընտրեմ եւ գործը կը վերջացնեմ:

—Մէկին. . . մէկին. . . եւ շուտ, եթէ ոչ, դրան էլ գուց է, կը խլեն:

Իմ Սէնիայ, Սէրիօժա, Ալէօշա. . .

Եւ պառաւը ընկնում էր մէկից միախն. գրկում էր նրանց. համբուրում էր եւ չէր կարողանում վճռել: Մայրական սէրը, որպէս բնական բարի տուրք՝ թափանցում է ամենասեւ սրտերն անգամ. Ալէքսէյն նայեց պառաւին եւ ըլ դիմանալով, երկար կռվում էր իր սրտի հետ. վերջապէս բարձրածայն լայ եղաւ. կարծես բոլորը պայմանաւորւած էին. պառաւը, Գօրդօնը, գերմանացի զինւորները, Սիմէօնը եւ Սէրիօժան՝ միանգամց լաց եղան:

Գեներալի լացը լսելով՝ զգայուն մայրը՝ արդէն նրա առաջ ծունկ չոգած աղերսագին հեւսում էր:

—Ողորմասիրու եղի՞ր:

—Ոչ, ես չեմ կարող, մայրիկ: Եթէ ես թագաւորը լինէի, ոչ մէկին չէի ներիլ. ողորմութիւնը մեծ է ուստի ես կը վերջացնեմ: Վիճակ:

Վիճակ գցեցին երեք քար: Գօրդօնը իւրաքանչիւրի վրա նշանակեց, իր գլխարկին ածեց եւ պառաւին մօտեցնելով, ասաց.

—Հանի՞ր:

Պառաւը հանում էր քարը, բայց մի այնպիսի տարօրինակ յոյսով, որ նա կարծում էր, թէ Սատուած-

կօգնէ նրան, բոլոր երեքին էլ հանել. . . պառաւը հանեց . . . աղաղակեց Ալէքսէյ. եւ ընկաւ ուշագնաց:

—Դնա, հեռացիր, Պօրօխ, ասաց Սիմէօնը. Վերցորու մայրիկին հետդ, թէ չէ կը զգաստանայ եւ նորից լայ կը լինի. լաւ բան չի լինի, եթէ մեռնի:

Գօրդօնը հրամայեց. պառաւին մաքուր օդ գուրս տանել եւ բերդը ըլ թողնել:

Ալէքսէյի ոտքի շղթայները հանում, հանգոյցները խարսոցում էին. նա մռայլ եւ լուռ էր. չէր ուրախանում եւ եղբարց վրա չէր նայում:

—Նը, Պօրօխ. ասաց Սիմէօնը. լաւ բան է աղատութիւնը:

—Փոխարինենք միմեանց, Սօւա. հաւատացիր ձրի կը վիճանեմ՝ աղատութիւնը:

—Ննորհակալ եմ . . . պատժատեղը կը գաս, այնտեղ կը ներենք միմեանց եւ կը բաժանենք:

—Ոչ, եթէ մայրիկը ըլ լինէր. . . Աստուծոյ երկիւղը ըլ լինէր. . . կը գամ: Գիտես, հէնց որ նրա ձայնը լսեցի, կարծես մարմնիս վրա սառոյց ածեցին: Առանց ձեզ աղատութիւնը ինչ անեմ. . . բայց մայրիկին հարկաւոր է. . . արդէն պառաւել է. իսկ երբ մեռնի, ես ինքս ինձ կը սպանեմ:

—Եղբայր, Էյ եղբայր. ասաց Սէրգէյը. —Ի՞նչ էր ասում մայրիկը, քանի որ մենք գեռ տանն էինք:

—Բանը հէնց գրանումն է, որ ես էլ լիշեցի. . . ներեցէք, եղբայրներ, գուրս թուաւ բերանից: Առանց ձեզ վշտաբեկ պիտի տանջեմ, մինչեւ ինք ինքս կը մեռնեմ:

—Ուրեմն, մնաս բարեւ, Պօրօխ: Յտեսութիւն:

—Բայց, Աստուած կամենայ, շուտով:

Գրկեցին միմեանց եւ Ալէքսէյն գուրս եկաւ վանքի սրահը:

2.

Եղանակը աշնանային էր՝ խոնաւ բարակ անձրեւը շաղում էր թանձր կաթիլներով. ամեն տեղ ցեխ էր եւ միայն քարայատակ ճանապարհներովն էր կարելի մի կերպ անցնել: Գօրդօնը հրամայեց, պառավին բերդից հեռացնել:

Ալէքսէյն բառ անգամ չէր խօսում. նա միայն իւր շուրջն էր նայում եւ երբեմն լսում էր, թէ արդեօք չե՞ն կանչում եղայրները ուեւ է խորհուրդ տալու:

Պառաւը յանկարծ բացեց աչքերը, ոտի կանգնեց... գգաստացաւ. եւ նորից սկսեց լալ ու խնդրել Գօրդօնին, որ թոյլ տայ իրեն թագաւորի մօտ գնալու. անզիջանելին՝ առաջւան պատասխանն էր տալիս եւ շտապեցնում էր պառաւին հեռանալու. . . Հասան մայր գուներին: Աւգուտեայ Պետրովնան հազիւ էր շարժում ոտքերը: Ալէքսէյը՝ ձեռքերով պահում էր պառաւին:

—Թո՛ղ, անցնեն. ասաց Գօրդօնը ծաղրածու դինորին, որ գուներին պահուրդ էր կանգնած:

—Միտկա, բոռուաց Ալէքսէյն գերմարդկային ձայնով, քիչ էր մնում պառաւը ընկնէր. ձեռքը՝ որով պահում էր մօրը, նա այնպիսի արագութեամբ յետ քաշեց եւ սկսեց իւր իրանի շուրջը ման ածել, որ չէր կարելի սփառել, թէ նա զէնք էր վնտուում. զէմքը՝ չարութիւն եւ կատաղութիւն էին արտայայտում. ատամները ակամայ սկսկում էին:

—Զարդարել են մաշկդ. աղաղակում էր նա. ես քեզ կը թռցնեմ աշխարհից:

Ոչ Գօրդօնը եւ ոչ պառաւը ըլ կարողացան հասկանալ նրա կատաղիութեան պատճառը: Ծաղրածու պահնորդը, Դիմիտրի Մելնով հրձիգն էր, որը ֆէօկտիստովի հետ միասին, յայտնեցին թագաւորին Նակլօվիտիի մոտադրութեան մասին: Թագաւորը՝ բացի շատ պարգեւներից, երկուսին էլ ծաղրածուների գունդը փոխեց:

—Ի՞նչ պատահեց քեզ, Ալէօշա, հոգացողութեամբ հարցրեց Աւգուտեայ Պետրովնան: Ալէքսէյն ընկաւ նրա վրա եւ սկսեց յիմայ նրան վնտուել, ասելով. . . .

—Մայրիկ, չունի՞ս դու. . . չունի՞ս. բայց առանց դանակի էլ կը վերջացնեմ: եւ վրա ընկաւ Մելնովին: Զարագործին դաւաճանեցին ոտքերը. թաց քարայատակի վրա նա վայր ընկաւ. գլուխը սուր քարին դիպցրեց. եւ տեղն ու տեղը հոգին աւանդեց. . .

Բոլորը պապանձւեցան. ոչ ոք, մինչեւ իսկ պառաւը, չէին կամենում օգնել մեռեալին եւ ոչ թէ ուշ լինելու պատճառով, ոչ, այլ ուրիշ զգացմունք էր անցել զարհուրելի դէպքիս վկաների սիրտը:

Անբաղդ մայրը, կարծես վերնուց հարւածւած աննըկարագրելի սարսափով, ուղղւեցաւ եւ քաջասիրտ, առանց արտասուզի ու անշշունջ երկար կանգնած էր մեռեալի մօտ: Նրա ձեռքը հանդարտ հեռացաւ կրծքից եւ այնպէս կանգնեց, կարծես մատնանիշ էր անում դիտկի վրա:

Առաջնոր—իսուց Գօրդօնը:

—Սպասիր, պառաւ: Գործը շատ դժւար է: Ես կ'երթամ եւ կը յայտնեմ; Նորին Մեծութեանը: Գումեղաւոր չես: Թագաւորը, անշուշտ կը ներէ երկրորդ որդիդ:

— Զէ հարկաւոր. ամենախիստ պարզութեամբ ա-  
սաց Սուդօտեայ Պետրովնան:

— Ինչպէս թէ չէ հարկաւոր:

— Ես անիծեալ մեղամքը եմ: շարունակում էր պա-  
ռակը կատարեալ հանգիստ եւ գլուխը շարժելով: Ծե-  
րութեանս օրով՝ հաւատս պակամեց. ես չը պէտք է  
խառնուէի Տիրոջ գործերում: հասկանում ես, պարո՞ն,  
աւելացրեց նա, ցոյց տալով գէպի երկինքը.—իմ որդի-  
քը, այստեղ էլ են դատապարուած: Ըմբռնում ես,  
արդեօք: Այդ—Աստուծոյ դատապատանն է:

— Ապա, ինչ ես կամենում, պառաւ:

— Ոչինչ բարի պարո՞ն, կատարեալ ոչինչ: Բայց ոչ.  
ինդիր ունեմ: թոյլ տուր, որդուս դիակը տանեմ: . .  
բայց ինչ եմ ասում: . . սա հօ առանց այդ էլ իմն  
է. եւ վրա ընկաւ Ալեքսէյի դիակը վերցնելու. բայց  
Գորդօնը չը թոյլադրեց. հրամայեց իւր զինորներին  
դիակը վերցնել եւ հիւրանոցը տանել. տալ պառակին,  
թաղման ծախս երեք արծաթ րուբլի եւ գնաց արբու-  
նական պալատը: Մայր գոները բացւեցան. սկսւեցաւ  
դիակի դուրս տանելը. անձրեւը հեղեղի փոխւեցաւ եւ  
շուտով, չը որոշւեցաւ, թէ որ կողմը թոցրին արագա-  
վագ ալիքները, յանցաւորի արիւնը:

Է.

Թագաւորը, ծնող—թագուհու մօրաքոյր Տատիանա  
Միխայելովնայի եւ պարոն Տիխօն Նիկիտիչ. Սորէշնեւի  
հետ, ճաշի սեղան էին նստած: Այդ արքունի շուք իմ-  
բի մէջն էլ բացակայ էր ուրախութիւնը: Թագաւորը  
տիսուր էր եւ այդ տիսութեան ստւէրը տարածում  
եւ երեւում էր բոլոր ներկայ եղողների վրա:

Մի գովիր ինձ, Տիխօն Նիկիտիչ. ասաց Պետրը.  
յլ մտածեցի: Պառաւը խղճացրեց ինձ: Այսօր մի ինչ որ,  
կարծես պակասէ ինձ: Այդ տեսակ մեղք, ես չէի կա-  
րող թողնել: Լիխօնացիները անզղայ յանցաւորներ են:  
Հարց ու փորձերին էլ, որպէս աւազակներ անզգայ էին.  
եւ խոստովանահօր հետ անկեղծ չէին. . . ուստի եւ  
ներւած—ազատածը միայն չարութիւն կ'աւելցնի. նա  
բարեկեց չի լինիլ. . .

Թագաւորը գեռ չէր վերջացրել, ներս վաղեց նրա  
սիրելի Խւան Միխայելօվիչ Գոլիցինը, որ այդ ժամանակ  
գեռ փափիլիկ երիտասարդ էր, որից եւ անցել է ներ-  
կայ զրոյցը իւր յետնորդներին:

— Ի՞նչ է եղել քեզ, Վանէս՝ հարցրեց թագաւորը  
անհանգստութեամբ: Գունաթափ եւ ողջ մարմնով գո-  
զալով, Գոլիցինը ոչինչ չը կարողացաւ ասել. բառերը  
խառնում էին:

— Ես տեսայ. . . գլուխը քարին. . . տեղնու տեղը  
մեռաւ. . .

Թագաւորը վեր կացաւ: Ներս մտաւ Գորդօնը եւ  
բացատրեց գործը: Պետրը ընկաւ ծնկների վրա Փրկի

պատկերի առաջ եւ միւսները ակամայ վեր կենալով  
խաչակնքում էին երեսները:

Կարճ աղօթքից յետոյ, թագաւորը ասաց:

— Այ քեզ գիտութիւն: Բայց վայ ձեզ, անդրդայ  
չարագործներ: Գիտացէք, որ Տիրոջ ինձ հաւատացած  
ճշմարտութիւնը, խստութեամբ կը պահպանեմ մինչեւ  
մահս: Օգնիր ինձ, Տէր: Կանչեցէք պառաւին. խելացի...  
եւ բարի մայր: Նա կատարեց իւր պարտքը. պէտք է  
միխթարել նրան. . . բայց պառաւը ոչ մի տեղ չէր ե-  
րեւում: ըլ գտան նրան. մինչեւ անդամ ըլ գիտէին,  
թէ ո՞ր կողմը գնաց նա հիւրանոցից. կառքով նա որ-  
դու գիակի հետ դուրս գնաց, բայց ո՞ր կողմը— անյայտ  
էր:

Պ.

Գօրդօնը ման էր գալիս իւր սենեակում արագ  
քայլերով: Պէտք էր պատժատեղը գնալ, սարսափելի  
տեսարանին հանգիստ վկայ լինելու: Ներս մտաւ կա-  
պիտանը եւ տեղեկացրեց, թէ մի ինչ որ պառաւ կա-  
մենում է նրան տեսնել:

— Թողէք ներս. ասաց գեներալը միջահատ ձայնով  
եւ ներս եկաւ Աւգուստեայ Պետրովնա Լիխոնուհին:

Անախորժ տեսակցութիւն: Պառաւը գիտէր, թէ  
գերմանացի պարոնը ո՞ւր էր պատրաստում գնալու:

— Ի՞նչ կամենաս. հարցրեց Գօրդօնը, ծածկելով  
յուղմունքը:

— Այսօր մահապատժում են որդոցս:

— Այս, այսօր են պատժելու:

— Տուր ինձ, նրանց գիակները, պարոն:

— Հրամեցէք. լաւ. . . մնաս բարեւ: Ես ժամանակ  
չունիմ: . . շտապով պատասխանեց գեներալը եւ համա-  
րեա վազով ճանապարհ ընկաւ, դառնացած մօր դառ-  
նագին շնորհակալութիւը տանելով իւր հետ:

Թ.

Անցել էր մի ամսից մօտ: Մօսկվայում իշխում էին  
Պօհանն ու Պետրը.— Կարգ եւ խաղաղութիւն. ժողո-  
վուրդը հանդարտուեցաւ խռովութիւններից եւ աղմուկ-  
ներից. բոլորին թւում էր, թէ փոթորկալից ժամա-  
նակը անդարձ անցաւ. բայց Նօվոդեւէլիցի վանքի խը-  
ցում: նոր ընծայ կոյս Սուսաննան՝ դեռ երկրաւոր յոյ-  
սեր ունէր՝ դեռ միջոցներ էր մտածում դառնալու  
երկրաւոր վայելչութեանց ու մեծութեանը: Պետրը՝  
բոլոր ժողովրդի հետ ամեն բան խաղաղացրած էր հա-  
մարում եւ հանգստօրէն ուսման գործին էր նըսիրւել:  
Հոկտ. 13-ին թագաւորը ժամադիր արեց Ալեքսէնեսկի  
մօսի դաշտը՝ ուր պէտք է գումարէէին ծաղրածու եւ  
հրձիգ գնդերը, եւ որոնցից պէտք է մարդիկ ընտրէր,  
նոր ձեւի գնդեր կազմելու համար:

Սուսանն էլ, կարծես մտադրւած՝ այդ օրը պարզ  
էր, թարմ եւ թեթեւ հովով: Կարմիր պալատից մինչեւ  
ուղղեպահ կայարանը պատնէշների եւ փողոցների վրա  
ալէկոծւում էին ժողովրդական զանազան խմբերը, ըս-  
պասում էին թագաւորական գնացքին: Սպասս եկեղեց-

ւոյ շուտաւարտ պլատարագից յետոյ, ոսկէ վանդակների յետեւից, թագաւորը՝ Ռօմօդանովսկու, Գօրդօնի, Լէ-փօրտի, Գօլուկնի, Պրօզօրօվսկու եւ շատ այլոց ուղղեկցութեամբ՝ դուրս եկաւ ձիահեծան:

Ուղղեպահ կայարանը յետ թողնելով, ընթանում էին անտառիկով. յանկարծ գէմ յանդիման եղան մի սարսափելի պառաւի. մանրաթել կեղեւով, շրջանակի նման գլուխն փաթաթած. ալէզարդ գեղնաւուն մազերը ծածանում էին քամուց. մերկ ոտքերը քաջի պէս էին տանում թոյլ պառաւին. նրա յենարանը մի թղտենոյ թուփ էր իւր ճիւզերով. պառաւ ուսերն մերկ էին: Նա ձեռքերը շարժելով արագ ընթանում էր եւ երբեմն մատները ճայթեցնելով ինքն իրան բարձրածայն խօսում: Թագաւորը եւ ուղեկիցները կանգնեցին. պառաւը նկատեց նրանց. ճանաչեց թագաւորին եւ երկրպագեց նրան:

—Աստուած օգնական մայրիկ . . . ուր եւ որտեղ: . . . վեր կաց բաւական է խոնարհւելո. ասաց թագաւորը:

—Գերեզմանից գէպ տուն, յոյս թագաւոր, պատասխանեց պառաւը:

—Ի՞նչ գերեզմանից:

—Երեխանց մօտն էի:

—Ովքե՞ր են քո երեխայքը:

—Լիսօնացիք, հայր թագաւոր:

—Բայց որտեղ են նրանք:

—Խոնաւ հողում, իմ անտեսանելի. ահա չորրորդ շաբաթը պէտք է լինի.

Պառաւել եմ, Տէր, եւ յիշողութիւնս էլ թոյլ է. բայց մազերիս վրա նշաններ եմ կտրել. . . ամեն օր քանի գալիս, այնքան կտրում եմ:

—Ինչու ես նրանց մօտ գնում:

—Այդ ինչ ես ասում, Տէր թագաւոր, ապա, ով պէտք է աղօթի նրանց համար. . . գիտե՞ս, թէ ինչ չարագործներ էին նրանք. եթէ ես նրանց համար չաղեցսեմ Աստուծուն, կարծում եմ, անպատճառ չեմ տեսնելի նրանց հետ՝ հանդերձեալում:

—Իսկ ինքդ ինչով ես ապրում:

—Փողոցների վրա խուշուռ եմ հաւաքում եւ այնպիսի աղքատներին բաժանում, որոնք փայտ գնելու փող չունին:

—Դու որտեղ ես ապրում:

—Սեպհական տանս, Տէր թագաւոր, մարդուս տանը. երեկ ես գնացէլ էի ծխական քահանայիս մօտ եւ ասացի նրան, որ մեռնեմ, թէ չէ, վեր առ մեր տունը, Տէր հայր, եկեղեցու համար եւ աղօթիք չարագործ Լիսօնացիների հոգու համար:

—Լսիր, պառաւ. ես խղճում եմ քեզ եւ կամենում եմ քեզ տուն ու տեղ գնել, որ ապրես:

—Աստուած տուն տեղ կը դնի ինձ, յոյս թագաւոր, իսկ փողը մեզնից աւելի է հարկաւոր քեզ: Եւ քո թագաւորական ողորմածափրութեանդ համար շնորհակալ եմ:

Պառաւը՝ յարգանգը եւ մինչեւ երկիրը գլուխ տւեց թագաւորին:

—Ինչպէս էլ կամենաս, մայրիկ. իսկ ես կը գամ քեզ մօտ. ասաց թագաւորը եւ շարունակեց ճանապարհը:

—Գլխիս վրա, հրամեցէք, իմ արեւ, հրամեցէք... թաղմանս վրա. ասաց պառաւը թագաւորի յետքից եւ շարունակեց իւր ճանապարհը:

Փ.


Երեկոյեան շատ ուշ. երբ բոլորովին մթնեց. Լի-  
խօնուհու տան առաջ կանգնեց թագաւորի միաձի նոր  
կառքը, որ յետոները Պետրոս մեծի միակ սիրելի կառքն  
էր:

Տան բոլոր դռները բաց էին եւ թափանցող ցուրտն  
ու խոնաւութիւնը զգացրեց Հիւրերին: Հարեւանները  
նկատելով, որ թագաւորը Լիխօնուհու տուն մտաւ, որ-  
տեղ վազուց հետէ լոյս չէին տեսել, վազե ն մի քա-  
նիար մոմերով, մի քանիսը դամբարներով, պառաւ  
Աւդօտեայի կողմը: Բայց նա արդէն չը կար, ոչ տանը՝  
եւ ոչ դուրսը: Նա ամենալաւ բնակարանն էր փոխւել:

—Օրինակելի մայր. ասաց թագաւորը: Գեներալ,  
Աստուած սրան զրկեց որդիներից—մենք փոխարինենք  
նրանց:

—Ես կը զբաղւեմ նրանով, Զերդ Մեծութիւն.—  
Թոյլ տւէք, ինձ, սրա թաղումը իմ հաշւիս առնեմ:

—Կիսենք, գեներալ. պատասխանեց թագաւորը.  
պինդ սեղմելով հաւատարիմ ծառայի ձեռքը. մենք ու-  
ղեւորւենք մինչեւ որդոց գերեզմանը եւ առաջինը մենք  
թափենք բռնով հող, բարի մօր դագաղի վրա:



3638

2013

